

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ, ԱՐԱՐԱՏՈՒՄԱՆ ԲԱՐԵԱՌ, ԵՐԵԱՆ, «ԼՈՒՍ» ԲՐԱՏՈ., 1989, 390 էջ:

Հայտնի է, որ լեզվի զարգացման ու կատարելագործման տարրեր փուլերում բարձրանալը եղել են մայրենիի սնուցիչ երակները, և այսօր էլ դրանք դեռ անսպառ աղբյուր են բառակազմի, քերականական ձևերի, առած-ասացվածքների, համով բառուրանի ու դարձվածքների ուսումնասիրության համար: Բարձրագույնից հատկապես Արարատյանը, որ հիմք է դարձել արեւելահայ աշխարհարարի կաղամվորման մեջ՝ շնորհիվ իր մի շարք առավելությունների (պարզ ու հասկանալի էր հայ լեզուն կրող հանրության բոլոր անդամներին, հնչյունական համակարգով ավելի մոտ զրարարին, այլև հարուստ բառապաշարով, քերականական այլևայլ ձևերով), ցավոք, մինչև վերջերս չէր ուսումնասիրվել: Դեռևս 1911-ին և ապա քառասուն տարի անց՝ 1951-ին Հ. Աճառյանը գրել է. «Հակառակ իր կարևորության, այս բարբառը գեո ուսումնասիրված չէ»:

Խորհրդահայ լեզվաբաններ Ա. Ղարիբյանը, Գ. Զահուկյանը, Ռ. Իշխանյանը, Մ. Ասատըրյանը և ուրիշներ թեև տարբեր առիթներով անդրադարձել են բարբառի որոշ հարցերի քննությանը, իսկ մի քանիսը կատարել են առանձին խոսվածքների ուսումնասիրություններ, բայց և այնպես Արարատյան բարբառի վերաբերյալ ամբողջական ուսումնասիրության բացը վաղուց արդեն խիստ զգացվում էր: Եվ ահա վերջերս հրապարակվեց Ռ. Մարկոսյանի ուշագրավ մենագրությունը, որն իրապես Արարատյան բարբառի ամբողջական ու ծավալուն ուսումնասիրության առաջին փորձն է: Հեղինակի վիճակագրական տվյալներով նշված բարբառով հաղորդակցվում են 162 գյուղերում և 5 քաղաքներում, իսկ բարբառախոս հանրությունը կազմում է ավելի քան 275 հազար մարդ:

Արարատյան բարբառի տարածման շառավիղը բավականաչափ ընդարձակ է, այն մեր առավել կենսունակ բարբառներից է և չնայած գտնվում է տարածյուղ և տարբեր խմբակցության բարբառների ոլորտում, այդուհանդերձ երկարածիգ ժամանակաշրջանում մեծ ազդեցություններ չի կրել՝ անվթար պահելով իր հիմնական հատկանիշները:

Բարբառի հնչյունական համակարգի առավել հետաքրքրական երևույթներից մեկը մենագրության հեղինակի՝ բարլառի խոսվածքներում հայտնաբերված բաղաձայնական համակարգի երկփեղկվածության երևույթն է, խոսվածքների մի մասում ձայնեղ պայթականների դիմաց շնչեղ ձայնեղների առկայությունը, մյուս մասում՝ խուլերի: Վիճակագրական տվյալներով պարզվում է, որ ջուրը 170 խոսվածքներից շնչեղ ձայնեղներ չունեն միայն 22-ը, որոնք կազմում են լարբառի 15 տոկոսը, մինչդեռ խոսվածքների 85 տոկոսին հարազատ են շնչեղ ձայնեղները՝ Բ՝, Գ՝, Դ՝, Զ՝, Ը՝ (էջ 66), որոնք, հակառակ այլոց կարծիքի, հնչույթի արժեք ունեն և օրինաչափորեն հանդես են գալիս թե՛ բնիկ հայերեն Բառերում և թե՛ հին փոխառություններում, ինչպես՝ բաժանել > Բ՝աժանել > Բ՝ըժանել > Բ՝աժնել, գարուն, գ՝արուն, դանակ > Գ՝անակ, ձայն > Զ՝էն, ջուր > Զ՝ուր, այլև բամբակ > Բ՝ամբակ, դարման > Գ՝արման, ձէթ > Զ՝էթ և այլն (էջ 65, 66, 68): Այս կանոնը չի տարածվում նոր և նորագույն փոխառությունների վրա, ուստի ձայնեղները մնում են անհնչյունափոխ, ինչպես՝ բլրուլ, ջայլ, դաֆար, բրիգադ, դոխտուր, գառգոն (սովորաբար լի) և այլն:

Աշխատության «Հնչյունաբանություն» բաժնում քննված են ոչ միայն բարբառի խոսվածքների ձայնավորական ու բաղաձայնական համակարգերի բաղում ու տարաբնույթ հարցերը, այլև փոխազդեցական հնչյունափոխության առավել բնորոշ դեպքերը՝ առնմանության և տարմանության, դրափոխության, բառերի ու նախադասությունների ամփոփման և կրկնության երևույթները: Ամփոփումը, ինչպես հավաստում է հեղինակը, լայն տարածում ունի մասնավորապես անձնանուններում, ինչպես՝ Արփենիկ > Արփո, Սաթենիկ > Սաթո, Արտավազ > Արտո, Խաչատուր > Խաչո, Վաչագան > Վաչո և այլն (էջ 82): Ինչպես նկատված է, ժողովուրդը սիրում է լեզվաարտահայտական սեղմ, հակիրճ ձևեր, այդ պատճառով էլ հաճախ խուսափում է երկարաբանությունից ու կրկնաբանությունից և երբեմն բարդ բառերն ու նա-

1 Հ. ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1951, էջ 330:

խաղաղություններն էլ սղոտ է անճանալիություն աստիճանի, ինչպես՝ Աստվածատուր՝ Ասատուր, Սատուր, Ասո, Ծս ինչ իմանամ՝ եսիմ, այ տղա՝ այտա, այ աղջիկ՝ ախլի են։

Առանձնակի կարևորություն է ներկայացնում աշխատության երրորդ մասը՝ «Բառագիտություն» բաժինը։ Այստեղ շեշտվում է այն միտքը, որ Արարատյան բարբառի բառապաշարի ճոխ ու հարուստ դարձվածքները, փոխաբերությունները, բառակազմության եղանակները զրական լեզվի հարստացման կարևոր միջոցներից են (էջ 84)։ Եվ իրոք, Արարատյան բառակազմի հարուստ բառային ֆոնդ ունի Ռ. Մարկոսյանի հաշվումներով բարբառի նշանակալի մասը կազմում են դրաբարյան բառերը, որոնց թիվը հասնում է շուրջ 3000-ի (էջ 84), դրանք բարբառին են փոխանցվել թե՛ անվթար՝ անհնչունափոխ ձևերով և թե՛ լուրսափոխ հատուկ հնչյունափոխական տարբերակներով, ինչպես՝ բաբալ, բ'անցըր (բարձր), դ'անգլի տանգի, կաշաղակ, ճաց, ջուր, միտի, ջախջախել||ջրնջրել, ցուրտ, փռս, փռել և այլն։ Ռառայանի նշանակալի մասը հնդեվրոպական ծագում ունեցող բառեր են, որոնք զբաղակցական կենսական են խոսվածքներում, ինչպես՝ բ'երել||պերել, գ'ող||կող, դ'ելի||տելի, լիլի, ճիճց, տուն, ձ'ուն||ծին, բուն և այլն (էջ 84)։ Բառակազմի ժանրակչի մասն են կազմում բարբառին հատուկ բառերը, որոնք ոչ ավանդված են դրաբարից, ոչ էլ փոխանված այլ լեզուներից։ Պրանք ինքնահատուկ են բարբառի խոսվածքներին, ինչպես՝ ակնալուկուր (խիստ տգեղ, այլանդակ), բ'աբել (ծաղիկ), բալանբոցիկ (ծխախառն ուժեղ բոց), գ'լնգըլ (դառնա, փոքրամարմին մարդ), թըրփօղ (դեր, մարմենդ), իզկուրու (հետք կորած, անհետացած), բըրբըռալ (գործի մեջ դանդաղել, նաև՝ սիրտը խառնել) և այլն (էջ 320, 321, 322, 364)։

Ոչ պակաս կարևորություն են ներկայացնում իմաստափոխության երևույթները, որոնք արտացոլում են իրողությունները յուրովի ընկալելու, բնորոշելու, արժեքավորելու բանական արարածի՝ մարդու մտածելակերպը։ Այսպես՝ ճառակ բառը բարբառում ածանցվելով՝ դարձել է աճառակ և ստացել դժոխք իմաստը՝ Սեվ աճառակն ասելով՝ Պարապրի բարբառում նույն բառը գործածվում է աճառակ հնչյունակազմով, միևնույն նշանակությամբ՝ Սըվ աճառակ բըռաս, յեա չըկաս։ Ծաղիկ նշանակում է նաև բորբոսնել, կապիկ նաև՝ հաղթել խոքով, ստեղծագործել, հորինել՝ Տունը ճառած խաղ ասելով, նաև առվի շուրջ ուղղել ալգու, դաշտի, բանջարանոցի ոռոգելի տարածքը, կըրթել՝ մանված թելի մազմզուկները մաքրել, նըրացնել, փօղօց՝ մոխիրը, աղբը թափելու տեղը։ Նույն նշանակությամբ Պարապրի բարբառը գործածում է ախպաճառ||ըխպըճառ բառը՝ էջը ըխպըճառն թավալ ասելով։ Դարձվածքների՝ ժողովրդի կենսափորձով վավերացված պատկերավոր մտածողության այդ փալլուն զանգեղի տեղին կիրառությունը խոսքին տալիս է թարմություն, դիպուկություն, դրանք անգնահատելի հարստություն են և ընդգրկում են հասարակական, տնտեսական կյանքի, կենցաղի տարբեր բնագավառները։ Ահա դրանցից մի քանիսը։ Ախպիր||ախպուրը գընա՝ կըցամափի (անճար, անձեռներեց մարդու մասին), գըլխի թակը բառը դընել (համոզելով խաբել, հանգստացնել), կաթ ու մեղան են (սիրով՝ հաշտ ու խաղաղ են), հօփն ծախել (ստախոս, մատին, դավաճան դառնալ), Սելը նըռալու տէլ սելվօրն ասելով նըռալ (արդարի փոխարեն անարդարն է ասելով), Սիրա վկայել (կանխազգալ), էրեսին ձըվածել տեղա։ չի ուղվի (չափազանց տգեղ), Ջօր տէլ գընա||էթա, կըկաճալի (ասվում է ձեռներեց, հաշտակ մարդու մասին), Պօշը փաշել (անաղմուկ, սոստափոս հեռանալ), օցի լեզու բափել (կեղծավորել, շողոքորթել) (էջ 91—95)։

Մենագրության մեջ Ռ. Մարկոսյանը պատշաճ ուշադրություն է դարձրել բառակազմության միջոցների տեխնիկայի հարցերին։ Բարբառում ծավալուն գործածություն ունեն համագրական և վերլուծական բարդությունները, որոնց բաղադրիչները զուգորդվում են ինչպես հոդակապով, այնպես էլ առանց հոդակապի։ Նմանօրինակ բարդություններ բարբառի խոսվածքների մեծ մասում հաճախական գործածություն ունեն, ինչպես՝ բ'ալանբոցիկ||պալանբոցիկ (ուժեղ բոց՝ ծխախառն), ժաժաճալօք (զլխի ոչ բնական շարժվելը), խելըթփուկ (կիսաուղեկորույս, խելթամաղ), մեճլեճառօց (սրտի ցանկալիք, ուտելիք), փառալիլ (քարկոծել, քարերով հալածել), քափքափա (թոռի պատերից կուտ գնացած, մոխրի մեջ ձևադրված հացը՝ լավալը), բըրբըռալ (ծանրորեն, հազիվ շարժվել, նաև՝ հազիվհազ, մի կերպ ապրել), կալմէլ տենի (շրջափակել, նեղը գցել), մաբալ մաճել (դարանակալել, ասվում է կատակ, նաև մարդու մասին), սիրա տենի (սրտապնդվել, համարձակվել) (էջ 96—99)։

Բարբառի բառային կազմը մեծապես հարստացել է ածանցման ճանապարհով։ Ինչպես առհասարակ մյուս բարբառներում, այնպես էլ Արարատյանում քիչ գործածական են նախածանցներն ու նախածանցավոր բառերը և ընդհակառակը, վերջածանցներն ու վերջածանցավորները անհամեմատաբար շատ են։

Ուսումնասիրության մեջ առանձնակի ուշադրություն է նվիրված բարբառի քերականական կառուցվածքին առնչվող հարցերին: Ձևաբանության բաժնում Մարկոսյանը կարևոր տեղ է հատկացրել խոսքի մասերի՝ առանձնապես գոյականի, դերանվան, բայի, հոլովման ու խոնարհման համակարգներին, այլև առկայացման կարգի քննությանը: Լեզվական բաղում փաստերի ցուցադրումով նա պարզաբանում է, թե բարբառի քերականական կառուցվածքը ինչպես է հիմք ծառայել արևելահայ աշխարհաբարի կազմավորման ընթացքին:

Արարատյան բարբառի ձևաբանական հիմնական առանձնահատկություններից մեկը ներգոյական հոլովի առկայությունն է, որ խոսվածքների գերակշիռ մասում օրինալարներ են գործառում է ում||ըմ կայուն վերջավորությամբ. միայն շուրջ 20 գյուղերի խոսվածքներում, ներգոյականը ձևաբանորեն նշույթավորված չլինելով, այդ իմաստն արտահայտվում է հայցականաձև ներգոյականով (ներգոյական հայցականով), ինչպես՝ Դուրսը շատ ցատոյ ա: Մէհ սաւր շատ խօսալ-ծաղիկ կա: Բաղդատ էլ շատ խօսումա կա: Աղասու միտքն էնա, վոր Աճի շինօրթուն գցի (Խ. Աբովյան օվերթ Հայաստանի), (էջ 107): Լեզվական այս իրողությունը առկա է Արարատի, Կողբի, Աբովյանի, Սևան-Հրազդանի շրջանների մի խումբ խոսվածքներում: Ընդհանրացման և համաբանության օրենքով այն տարածվել է ամեն տեսակի գոյականների վրա՝ առանց սահմանափակման:

Բարբառի ձևաբանական կարևոր դուզարանություններից մեկն էլ այն է, որ, ի տարբերություն այլ շատ բարբառների ու խոսվածքների, սեռական և տրական հոլովներն ունեն կայուն ձևեր, որոնք որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Սեռականը առանց բացառության հոդառու չէ, իսկ տրականը, պայմանավորված առկայացման կամ շտկայացման հանգամանքով՝ կարող է հոդ ստանալ կամ չստանալ:

Հանգամանալից քննության է աւելված Դերաճունը, ուսումնասիրված են դերանվան տեսակները, դրանց հոլովման ընդհանուր՝ օրինալարի ձևերը, ինչպես նաև այն տարբերություններն ու տարբերակները, որ կան այս կամ այն խոսվածքում: Դերանունների՝ ուշադիր, խնամքով կազմված հոլովման հարացույցները և դրանց առնչվող մեկնաբանություններն ու տարբաբանումները հստակ պատկերացում են տալիս դերանունների հոլովման յուրահատկությունների մասին: Հետաքրքրական է դերանվան փոխանուն սեռականի հոլովումը, ինչպես նաև անձնական դերանունների զուգաձևերի ոճական ինքնահատուկ կիրառությունը բարբառի խոսվածքներում:

Խոսքի մասերից անհամեմատ խոր ու համակողմանի է ուսումնասիրված բայը: Արարատյան բարբառում այն քերականական՝ ձևակազմական բազմազան դրսևորումներով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Ընդհանուր օրինալարություններ ունենալով ձյուղակից և ոչ ձյուղակից բարբառների և արդի գրական հայերենի հետ՝ բարբառն ունի նաև մի շարք զուգալսություններ, որպիսիք բնորոշ ու ինքնատիպ են բարբառիս խոսվածքներում:

Արարատյան բարբառի ու նրա խոսվածքների ամենացայտուն յուրահատկություններից մեկը գրաբարի գրեթե բոլոր խոնարհումների պահպանումն է՝ ե, ի, ա, ու: Գրաբարյան ու խոնարհումը բարբառում, ընայած փոխարկվել է ե խոնարհման, սակայն նոյնմիջոցների շրջանի մեծ մասում, ինչպես նաև թուրքերի շրջանի Շեռլի, Թեղուտի, Հաղպատի, Զոճկանի, Ստեփանավանի շրջանի Լեշանի խոսվածքներում բաղադրության քերականական և ածանց ունենող բայերում պահպանվել է, ինչպես՝ առնուլ, զըղնուլ (գտնել), զաթթնուլ, մրեռնուլ, ճառնուլ (էջ 142):

Աշխատանքում հանգամանորեն դիտարկված են ազատ (ինքնուրույն) և կախյալ բոլոր ութ դերբայները, դերբայական ու դիմավոր ձևերի կազմությունը, խոնարհման օրինալարի և բացառիկ երևույթները, բայի սեռը, սեռային առումները, կանոնավոր և պարականոն (անկանոն) բայերը և այլն: Աչքաթող ընեն արվել խոսքի նաև մյուս մասերը. բավականաչափ տեղ է տրված լրբավող խոսքի մասերին՝ մակբային ու կապին, շաղկապին ու եղանակավորող բառերին և ձայնարկություններին:

Կարևոր է բնորոշել, որ բարբառագիտական հրապարակված շատ աշխատություններում հաղիւղեպ են անդրադարձել բարբառների ու խոսվածքների շարահյուսությանը: Ռ. Մարկոսյանն իր գրքում մի առանձին բաժին է նվիրել շարահյուսությանն ու շարագասությունը՝ կատարելով նույնը և ուշագրավ մի շարք դիտողություններ՝ մասնավորապես հարցական նախադասությունների կազմության միջոցների, հարցման բնույթի առանձնահատկությունների վերաբերյալ, համադասական և ստորադասական նախադասությունների կառուցվածքի, կապակցման միջոցների, գերադաս ու ստորադաս բաղադրիչ նախադասությունների շարադասության, ստորադաս նախադասությունների բնույթների մասին և այլն: Արարատյան բարբառում, օրինակ, հարցում արտահայտող բայը վօր||վօր թարմատար շաղկապից առաջ շա-

րադապելիս հարցական նախադասությունը ստանում է ժխտական իմաստ, ինչպես՝ երեխիքին տեսա՞վ վար (նշանակում է՝ չտեսավ), Սէլը բըշե՞ց վար (չբշեց)։

Դիմավոր բայերի դրական և բացասական ձևերի կրկնությունը վար, ու շաղկապների հետ արտաբայություն է գործողության սաստկություն, ուժգնություն (իմ ընկալմամբ, նաև սևականություն, ինչպես՝ գ'րեաց վար գրեաց, չկալ վար չէկալ, փեղեց վար փեղեց, զրեաց ու զրեաց, չէկալ ու չէկալ, փեղեց ու փեղեց։ Գրեաց ու զրեաց նշանակում է գնաց բնդմիշտ՝ չվերադառնալու պայմանով, չէկալ ու չէկալ՝ բոլորովին չեկալ, այլևս չեկալ։ Վաղուց նկատված է, որ ունեմ, լինեմ, կամ պակասավոր բայերի հետ անձնական դերանուն ենթական բարբառներում կարող է գործածվել նաև տրական հոլովով, այս իրողությունը առկա է նաև Արարատյան բարբառում, ինչպես՝ ինձ||բնձի շատ գիրք ունէմ, Ընդրան մի խօրօտ ախիկ լլալ։ Թվում է՝ այս երևույթը ընդհանրացման և համարանության օրենքով անցել է ինչպես անձնանիշ, այնպես էլ շնչավոր այլ գոյականների վրա։

Շատ արժեքավոր է աշխատության նաև վեցերորդ մասը. այստեղ հավաքված են գիտական տառադարձությամբ դրի առնված հարուստ ու բազմաբնույթ հարյուրավոր նմուշներ՝ Արարատյան բարբառի դրվել բոլոր խոսվածքներով. դրանք փաստական հարուստ նյութ կարող են ծառայել նոր դիտարկումների, ուսումնասիրությունների ու հետազոտությունների հասարակ աշխատության վերջին՝ յոթերորդ մասում, ամփոփված են յառացանկեր՝ դրաբարից՝ Արարատյան բարբառ, բարբառային բառեր, փոխառյալ բառեր՝ այլ լեզուներից և ռուսերենից։

Աշխատության մասնակի մի քանի հարցերի վերաբերյալ ունեմ որոշ նկատառումներ ու դիտարկություններ։ Այսպես՝ դրքի 88 էջում կլլէկէլ բառի առաջին նշանակության համար դրվում է. պղինձը անագատևա,—թվում է՝ վրիպակ է։ Պետք է լինի անագապատել, Կաթնահունցը ոչ թե կաթով շաղախված խմորն է, ինչպես նշված է տեղում (էջ 96), այլ այդ խմորից պատրաստված թխվածքը, ՎՄի շարք խոսվածքներում (Արուվյան, Հրադրան, Սևան),—գրում է հեղինակը,—Օռվ վերջացող հատուկ անունների հոլովման դեպքում ի հոլովիչը փոխվում է -ի՝ Սառոյ ախպերը, Կառոյ խոսկը, Մառոյ տունը ևլն... (էջ 110)։ Բերված օրինակներում ի հոլովիչը ոչ թե փոխվում է յ-ի, այլ ի-ս սղվում-ընկնում է, և թևույթի գործառույթը ստանձնում է յ ձայնակապը։ Առանց կապի մասին Մարկոսյանը գրում է. «...այն արտաբայություն է ժխտման, բացասման հարաբերություն և իր խնդրի հետ միասին նախադասության մեջ դառնում է ձևի պարագա»՝ առանց լավ հեղեղի ճամբա չէն գրնա (էջ 187)։ Բերված օրինակը ճիշտ է, բացատրությունը՝ թերի։ Հիշյալ կապը եթե հարաբերակցվում, կապվում է գոյականի, կապվող բառի հետ, դառնում է որոշիչ, ինչպես՝ Առանց երեխայի տունը նման է ջրատած ջաղացի, ուր առանց երեխայի կապային անգամը որոշիչ է։

Մենագրության ընդհանուր շարադրանքը գերազանցապես կատարված է պարզ, հստակ, զրական օրինակների ու մատչելի լեզվով, սակայն մի երկու տեղ սպրդել են որոշ անճշտություններ։ Այսպես, աշխատության 122-րդ էջում հեղինակը գրում է՝ «Ինչպես ցույց են տալիս փաստերը, քննարկված խոսվածքների գոյականը ներկայացնում է մի պարզ ու կոտ համակարգ, որը մեծ ընդհանրություններ ունի ժամանակակից զրական լեզվի հետ» կամ՝ «Ուղղական հոլովը իր կազմությամբ և շարահյուսական գործառույթներով նման է արդի արևելահայ զրական լեզվի ուղղականին» (էջ 107)։ Կարծում ենք՝ ճիշտ հակառակը պիտի ասվեր, այսինքն՝ զրական հայերենը ընդհանրություններ ունի Արարատյան բարբառի հետ և ոչ հակառակը, չէ որ արևելահայ զրական հայերենն է կազմավորվել, բարձրացել Արարատյան բարբառի հիմքի վրա։

Մի դիտողություն ևս. բառագիտության բաժնի ամփոփիչ խոսքի մեջ հեղինակը գրում է. «Բարբառի խոսվածքների ընդհանուր և ամփոփ պատկերը ցույց տալու նպատակով անհրաժեշտ ենք գտնում օգտագործել Գ. Ջահուկյանի կողմից առաջադրված՝ բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը» (էջ 103)։ Այս տողերին հետևում է բացատրություն, թե ինչպես են կազմվել խոսվածքների զուգաբանությունների համեմատական տախտակները։ Հիշյալ + և —նիշերով տախտակ-աղյուսակները պետք է տեղադրված լինեն հենց այդ տեղում, մինչդեռ տեղաշարժվել, դնացել-հանգրվանել են հինգերորդ մասի՝ շարահյուսության և շարադասության բաժնի վերջում արված եզրակացություններից հետո։

Նշվաբան կարելի է ասել, որ նկատված վրիպումները, թերությունները ամենևին չեն ստվերում կատարված մեծ ու տքնաշան աշխատանքը։ Մենագրությունը արժեքավոր, գիտական լուրջ հետազոտություն է՝ այն օգտակար կարող է լինել ինչպես լեզվի պատմության և բարբառագիտության հարցերով զբաղվողների, այնպես էլ բուհերի բանասիրական բաժինների ուսանողների և ասպիրանտների համար։

Ա. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների ֆեկեդատ